



ՆԱՅԱԳԻՏԱԿԱՆ



ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«ԹԱՂՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Թաղման ծիսական արարողությունները և այդ երևույթի զանազան կողմերն արտացոլող բառապաշարը, առնչվելով մահ-մեռնել հասկացությանը, արտացոլում է մարդու անդրերկրային ճակատագիրը ոչ թե հոգու (անշոշափելիի, աննյութականի), այլ մարմնի՝ նյութականի տեսանկյունից:

Տարբեր լեզվամտածողություններում, հատկապես խոսակցական լեզվում, մեռնել հասկացությունը հաճախ արտահայտվում է թաղել և հոմանիշ այլ բառերով ու բառակապակցություններով: Արդի հայերենն էլ հարուստ է մտան կարգի միավորներով, որոնք մահվան ընկալման յուրատեսակ արտահայտություններ են՝ դրսևրելով լեզվամտածողական հնագույն ակունքներ: Հմմտ. թաղել (բոլը, գլուխը, որևէ մեկին), գետինը մտնել, գերեզման իջնել, պատանքը կարել, դագաղը մտնել և այլն:

Ուսումնասիրողները նկատել են, որ «թաղման ծեսերին վերաբերող հնդեվրոպական ավանդույթների առանձին տվյալներ թույլ են տալիս ենթադրելու դիակի թաղման երկու հիմնական ձևի առկայություն՝ դիակիզում ու մնացորդների թաղում և թաղում հողի մեջ»¹:

Հայ մատենագրության մեջ հայ իրականությանը վերաբերող դիակիզման վկայություն մեզ չի հանդիպել, սակայն հնագիտական պեղումների արդյունքները հաս-

¹ Т. Гамкрелдзе, Вяч. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы. Тбилиси, 1984., стр. 830.

տատում են Հայաստանի տարածքում դիակիզման գոյությունը: «Դիակիզումը Հայաստանում նորությունն չէր, այն հանդիպում է դեռևս վաղ և ուշ բրոնզեդարյան, երկաթի և վաղ հայկական շրջաններում: 1970 թ. Սիսիանում բացված իշխանական դամբանի և 1971 թ. Արտաշատի դամբարանադաշտերի պեղումները ցույց են տալիս, որ անտիկ շրջանում թաղման այլ ձևերի հետ միասին տարածված են եղել դիակիզումը և դիակի թաղումը, որը ուղեկցվել է թաղման հանդիսավոր արարողություններով և ծիսական ճաշկերույթով՝ հոգեհացով»²: Դիակիզման վերաբերյալ թերևս մտորելու տեղիք է տալիս նաև հայերենի աճյուն բառը, որը գրաբարում ունի «մոխիր» իմաստը՝ հ. -ե. *as «այրել, վառել»-ից: Գրաբարի աճին և արդի հայերենի աճյուն («դիակ») բառերի միջև իմաստային կապ, անշուշտ, կարելի է տեսնել:

Հիշենք, որ դիակիզման արարողությունը բավական տարածված է եղել գրադաշտ պարսիկների շրջանում³:

Հին հնդեվրոպացիների դիակիզման արարողությունը ինքնին ենթադրում է բարդ տեխնոլոգիայի առկայություն և պետք է ունենար որոշակի խորհրդասպատական նշանակություն: Այդ սիմվոլը կրակն էր, որը մաքրագործում էր մարդուն, ազատում նրա «հոգին», և որը գնում է «այն աշխարհ»⁴:

Թաղում իմաստային խմբի բառաշերտում առկայանում են այլաբերացման տարրեր՝ իրականության հետ կորստի, չգոյի հարաբերակցումը մեղմելու, կյանքի անընդհատությունը զգալու միտումով: Հմտ. գերեզմանի «հանգստոց, հանգրստարան» ավանդումները, արևելալավոնական լեզուներում *домовка* («դազաղ»), *зимо-вище* («գերեզման») և այլն⁵:

Տարբեր լեզվամտածողություններում առանձնանում են որոշ խորհրդանիշեր, որոնք կապվում են թաղման էության ընկալման և ծիսակարգի հետ: Հայերենի սլվյալները թույլ են տալիս առանձնացնելու մի քանի բառ-խորհրդանիշեր:

Թաղման էական իրակություններից մեկը ճանապարհ հասկացությունն է: Թաղման արարողակարգում, առաջին հերթին, սա ճանապարհն է դեպի «այն կյանք» տանից (դիակը գտնվելու վայրից) դեպի գերեզմանոց իրական ճանապարհով: Այս հատվածում էլ իրականանում են տարբեր ծեսեր՝ դանդաղ ընթացք, ճա-

² Ժ. Խաչատրյան, Դիակիզումը Հայաստանում (մ. թ. ա. 2-րդ - մ. թ. 3-րդ դդ.): «Լրաբեր» հասարակական գիտությունների, համար 2, 1975, էջ 57, 63:

³ Հայտնի է, որ գրադաշտ պարսիկները դիակը դնում էին մի տեղ, որ թույլներն ու գազանները հոշոտեն, այնուհետև ոսկորները թաղում էին հողի մեջ, դրանով իսկ խուսափելով «հողի կեղտոտմանից»: Դիակի հոշոտման սովորությունը, սակայն, ո'չ իրանական, առավել ևս ո'չ հնդեվրոպական ավանդույթ չէ: Աքեմենյան պարսիկները, օրհնակ, դիակը թաղում էին: Հետագայում միայն Փոքր Ասիայի պահանջներին համապատասխան, կատարվում է մարմինը չթաղելու արարողությունը (Տե՛ս В. Г. Луконин, Культура и экономика древнего Ирана. М., 1980, стр. 321):

⁴ Т. Гамкрелидзе... ԳՎԼ, աշխ., էջ 381:

⁵ О. А. Седякова, Методоритическая лексика погребального обряда. Материалы к словарю (Славянское и балканское языкознание. М., 1983, стр. 204)

նապարհին ծաղիկներ շաղ տալ, նույն ճանապարհով տուն չվերադառնալ և այլն: Նկատենք, որ դեպի գերեզմանոց ճանապարհի ծիսային արարողությունները տարբեր հանրություններում տարբեր ձևերով ու բովանդակությամբ են ներկայացնում:

Գրաբարյան ի ուղի արկանել - յուղարկել-ը իր բուն իմաստից զատ գործառու է և «թաղման արարողություն, թաղում» նշանակությամբ, որն, անշուշտ, «ուղարկել, ճանապարհ գցել» իմաստային հենքի վրա կատարված փոխաբերացում է՝ անպայման հնադարյան ակունքներով՝ վկայված 5-րդ դարից: Բերենք որոշ օրինակներ. «Առատապես սրտացառութեամբ հանդերձեցին զնոսա եւ յուղարկեցին» (ՆՀԲ), «Ջղուտորիկն իմ յուղարկեցի ի գերեզման» (ՆՀԲ), «Ոչ կամիմք զբանն մարմին լինել, զի մի՛ նովա եւ միջնորդ մեզ եղիցի վերնաճանապարհորդութեանն եւ զսո ի յերկինս բնակութեան օթեւանացն» (Աթանաս. 129)⁶:

Եթե կա ճանապարհ, ապա կա և հանգրվանը՝ տունը, օթևանը, դեպի ուր տանում է այդ ճանապարհը: «Բազում օթեւանք են ի տան արքայութեանն Հօր» (Փարպ. 32), «Պատեցին զպարկեշտ մարմինն արդարոյն ըստ արժանի կայանից նշմարտիցն» (Ն. տ. 38), «Սոցա պատրաստեցան տեղիք բնակութեան եւ արժանի եղեալք շիրիմք հանգստեան» (Բուզ. 6), «Վաղիւ երթալոց ես ի հայրենիսն, անդ հանգիիր» (Եզն. 307): Հայրենիք այս համատեքստում նշանակում է «գերեզման»:

«Այնկյանքային» օթևանն է խորհրդանշում թերևս և դագաղը, տապանը, ապա և գերեզմանին կից կառուցված խորանը, տաճարը: Ահա Կորյունի վկայությունը Մաշտոցի գերեզմանի վերաբերյալ. «Իսկ յետ երից ամաց անցելոյ յաջողեցան վահանայ Ամատունոյ զԲրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմք քանդակելովք եւ ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստն յօրինեալ» (Կոր. 94):

Ոչ երկրային կյանքն են խորհրդանշում նաև խաւարը, մութը՝ ի հակադրություն լույսի, արեւ-ի, որոնք երկրային կյանքի խորհրդանիշեր են: «Ի վաղիւն վախճանեալ յուղարկի ի խաւարն արտաքին» (Փարպ. 140):

Անդրադառնանք թաղում իմաստային խմբի բառապաշարին, հոմանիշային շարքերին՝ որոշ նկատառումներով ու դիտարկումներով: Հասկացության հիմնաբառերն են թաղել, թաղում-ը: «Վախճանեալք թաղեցան ի դիրս հարց իւրեանց» (Փարպ. 110), «Ի նմին աւանի ի Կուաշ թաղեցաւ (Սոր. 283): «Եւ զմեռեալս ի հող թաղելով գերկիր ապականէք» (Եղիշ. 46):

Թաղել հասկացությունը արտահայտվում է նաև հող+որևէ բայ կապակցությամբ. «Կամեցան հողոյ տալ զբրիստոռէին մարմինն» (Ասող. 254), «Ի հող իջանել» (ՆՀԲ): «Վախճանեցի ամենայն մարմին... ի հող դարձցի ուստի եւ ստեղծաւ (Յոր ԼԴ 15), «Հողոյ և պատանաց չլինել արժանի» (ՆՀԲ):

⁶ Վերաճանապարհորդութիւն բառը ՆՀԲ-ն չունի:

Ծածկել նույնպես կիրառվում է «թաղել» նշանակությամբ. «Այլ տարցին... ես ծածկեացեմ ընդ հողոյ» (Բուգ. 37), «Իսկ իբրև զմեռեալն ծածկեցին անդէմ ի տեղ-տղն՝ յորում սպանան» (Բուգ. 103), «Յուրաքանչիւր շիրիմս առ հարսն իրեանց ծածկիցեն» (Բ Մակ. ԺԲ 39):

Հասկացությունն արտահայտվում է նաև գերեզման+որևէ բայ կառույցով. «Երբ ի մահիճսն ելանես, համարես թէ ի գերեզման ես իջեալ» (Երգ. 305)⁷:

Հանգուցանել բայն էլ «թաղել» իմաստն ունի. «...զպատուական մարմին... տարեալ հանգուցին յիրեանց գիւղն յԱշտիշատ» (Խոր. 356): «Յայնժամ լեալ աղմուկ շփոթի յամբոխութեանն... վասն հանգուցանելոյ զպարկեշտն զայն մարմին» (Խոր. 357):

Գրաբարում խորել և թաղել հոմանիշներ են, բայց մատենագրության մեջ խորել («մահացածին թաղել») գործածություն մեզ չի հանդիպել: Երևի չպետք է անվերապահորեն ժխտել խորել/խորանալ նշված իմաստով գործածությունը գրաբարում (այլ բան է, որ չի վկայված), մանավանդ որ որոշ բարբառներ ունեն խոր խորանալ («մեռնել», «թաղվել») անձեքը:

Վերը անդրադարձել ենք յուղարկել բային. այս բայահիմքով կազմված յուղարկարորութիւն գոյականի հոմանիշներն են դիահանէք/դիահանութիւն: Վերջիններս նվազ հաճախական են և ըստ երևութիւն բարբառային/տարածքային տարբերակներ են եղել: Նվազ հաճախականությունը կարելի է փաստարկել նաև այն հանգամանքով, որ այդ բառերի դեպքում այլաբերացում չկա, և ժողովուրդը խուսափել է բառի հաճախական օգտագործումից: Նկատենք, որ 5-րդ դարի ինքնուրույն գրականության մեջ դիահանութիւն վկայված չէ, իսկ բայական ձևն էլ ընդհանրապես գրաբարում վկայված չէ:

Թաղման ծիսակարգի հետ սերտորեն առնչվող դագաղ հասկացությունը ներկայանում է արկղ, դագաղ, տապան հոմանիշային շարքով: Պայմանականորեն այս շարքի մեջ կարելի է ընդգրկել և պատանը: Գրաբարի բառարանները արկղ և տապան բառերի՝ մեզ հետաքրքրող իմաստները նշում են որպես ոչ նախնական՝ երկրորդական, իսկ դագաղ-ի դեպքում՝ ընդհակառակը: Նկատված է, որ վերջինս հատկապես վաղ գրաբարում հաճախական է հոգնակի թվով:

Արկղ-ը իր հիմնական նշանակությունից զատ գործածվում է նաև «դագաղ» իմաստով. «Եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկել սրբոյն հանդերձ ամենայն անուշահոտ խնկօք եղեալ եւ կնքեալ քրիստոսական կնքովն» (Կոր. 88), «Ջուրք աստուածընկալ արկեղօքն երանելի մարմնոցն» (ՆՀԲ): Այս և այլ կարգի օրինակները հաստատում են, որ մատենագրության մեջ արկղ («տապան») կիրառվում է հատկապես այն ժամանակ, երբ նկատի ունի սրբերի, հեղինակավոր անձանց:

⁷ Գերեզմանել («թաղել») բառը վաղ գրաբարում ավանդված չէ. ՆՀԲ-ի միակ վկայությունը Գանձակեցոց է:

Արմ-ը արկղ-ը մեկնում է «մեռելների ոսկորները պահելու սնդուկ»․ ավելի ստույգ է ՆՀԲ-ի մեկնությունը․ «տապան մարմնոց սրբոց»:

Վերոհիշյալ հոմանիշային շարքերի անդամներից արկղ-ը լատիներենից կատարված փոխառություն է․ արդեն լրացուցիչ փաստեր կան տապան-ի իրանական ծագումը հիմնավորելու համար․ մանավանդ սողղ․ *թր'ո*, պրս․ *tabang** y բառերի առկայության դեպքում⁸։ Գագաղ-ի ծագումը պարզ չէ:

Ինչպես տեսնում ենք, իմաստային այս ենթախմբում բնիկ հայերեն բառ չկա․ հնարավոր է, որ այն եղել է, բայց դուրս է մղվել օտար փոխառությունների կողմից (այդպես են, օրինակ, հայերենի գունանվանական համակարգի բոլոր հիմնական անվանումները՝ բացառությամբ դեղիմի): Տապան-ի իմաստով կարելի է ենթադրել նաև բառի գործածությունը, որի մասին քիչ հետո:

Թաղման տեղ հասկացությունը գրաբարում արտահայտվում է գերեզման, շիրիմ, դամբան, դիր(ք), հանգստոց, հանգստարան, տապան բառերով: Թաղման նախնական ըմբռնման մեջ, ինչպես նշել ենք, առկա էր «բնակարան», «օթևան» գաղափարը՝ «այնկյանքային» մի բնակատեղի, որ կյանքի յուրատեսակ շարունակությունն է, և պատահական չէ, որ հնում հանգուցյալի հետ դնում էին բազմազան կահ-կարասիներ, անձնական օգտագործման իրեր, զանազան կենդանիներ (հատկապես ձի և շուն):

Հնդեվրոպական պատկերացումներում «այներկային» կյանքը նաև արտա-վայր է, որը իրական աշխարհից անջրպետված է ջրով, և հոգիները այնտեղ հասնելու համար պետք է ուղևորվեն նավով⁹:

Հ. ե - *ո* u-s «նավ» բառը երկրորդաբար կարող է ձեռք բերել նաև «մահ» իմաստը: Հմմտ. Գոթ․ *naus* («դիակ»), ռ. անգլ. ո* (o) («դի»), ռ. ռուս. *навь* («դի»), ռ. չեխ. *nav* («գերեզման») և այլն¹⁰:

Բնականաբար, հայերը ջրային մեծ տարածություններ չունենալով, թաղման այդպիսի վայր չէին ընտրի¹¹:

Անդրադառնալով թաղման վայր հասկացության հոմանիշային շարքի անդամների իմաստագործառական քննությանը:

⁸ Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները: Ե., 1990, էջ 262:

⁹ Տե՛ս Կ. Գամքրելիզե..., նշվ. աշխ. էջ 825:

¹⁰ Կ. Գամքրելիզե..., նշվ. աշխ., էջ 825:

¹¹ Նորվեգիայում 1880 թ. պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի հսկա նավ՝ 2 մ երկարությամբ և 5,2 մ լայնությամբ․ նավի խցերից մեկում մի մարդու կմախք էր, այդ նույն խցում բազմաթիվ իրերի հետ կային նաև 12 ձիու և 6 շան կմախք: Ենթադրվում է, որ վիկինգները իրենց մեռելներին թաղել են նավերում (տե՛ս Ա. Ս. Амальрик, А. Л. Монгайт, В поисках исчезнувших цивилизаций. М., 1966, стр. 56): Ուշագրավ է և Մակարայեցիով գրքի հաղորդումը․ «Եւ անդ շինեաց շինուած ի վերայ գերեզմանի... եւ բարձրացոց զնա գործ քարկոի քարկոի շուրջանակի... եւ եղ զկողիւք վանդակին գործ քանդակի նուազ նմանութեան, զի երեւելի կացցեն, որ անցանն ընդ ծով նուաք, առ շիրմաք, զոր արարին Մովդիիմ մինչև յարս յայս» (Ա. Մակ. ԺԳ. 27-30):

Գերեզման-ը հաճախական կիրառություն ունի հայերենի բոլոր փուլերում: Բառը իրանական փոխառություն է. եթե վստահելի է Արմատական բառարանի ստուգաբանությունը՝ փոխատու լեզվում բառին վերագրելով «երկինք», «գովեստի տուն», «մազդեզականների արքայական օթևանը», պապ իրանական լեզուներում այն արդեն այլաբերացված էր:

Գերեզման բաղադրիչով 5-րդ դարից վկայված են գերեզմանաբրուրիւն, գերեզմանական, գերեզմանախոր, գերեզմանակրկիտ, գերեզմանատեղի: Գերեզմանել և գերեզմանատուն վկայված են ուշ շրջանից (Գանձակեցի, Ուռհայեցի):

Շիրիմ («գերեզման, գերեզմանաքար») բառի ծագումը ստույգ չէ: Այդ արմատով այլ կազմություններ քիչ կան. շիրմակից, շիրմատր հետհիմզերորդարյան վկայություններ են:

Դամբան - թեև ևս. ծագում ունի՝ *dhr̥ bh «փորել» արմատից, սակայն գրաբարում հաճախական չէ, և ըստ բառարանային տվյալների 5-րդ դարից վկայություն չկա: Դամբանական, դամբանեն հետին վկայություններ են: Դիր-ը հաստատապես ևս. ծագում ունի՝ *dhē («դնել»), որից հայ. դնել և *դի արմատից ր-ի հավելմամբ՝ դիր տարբերակը: Վկայված է 5-րդ դարից: Դիր(ք) («գերեզման») գործածվում է հիմնականում «արբերի, առաքինի մարդկանց գերեզման» ճշանակությամբ, այսինքն՝ առկա է վերաբերմունքային գործոնը: Ահա մի քանի բնագրային օրինակներ. «...Պատահե՛ նմա տեղի օթարանին մօտ առ դիրս սրբոյ Առաքելոյն» (Խոր. 212), «Յաղագս այնր ոչ արծանի համարեցան ի դիրս սրբոցն թաղել ի Վաղարշապատ քաղաքի» (Խոր. 289), «Ի դիրս հարցն ձերոց հանգուսցէ զոսկերս ձեր» (Փարս. 93):

Հանգստոց/հանգստարան - Հան(գ) արմատով և իստ+ոց(անոց) ածանցներով կազմություն է: Արմ-ում հանգ-ը չի ստուգաբանված, իսկ Գ. Ջահուկյանը այն համարում է բնիկ հայերեն՝ ևս. կյւ-ից¹²:

Հանգիստ/հանգստոց բառերը նույնպես այլաբերացված են, որը բնորոշ է մահ, թաղում իմաստային խումբը ներկայացնող շատ միավորների: Հիշյալ բառերը դրսևորում են իմաստային մի նրբություն՝ վերաբերելով դարձյալ ոչ բոլոր, այլ բառօգտագործողի կողմից դրական, առաքինի համարվող մարդկանց գերեզմաններին: «Արդ՝ առեալ թագաւորին փայտատ եւ բահ՝ հատանէր զդիրս հանգստոցաց սրբոցըն» (Ագաթ. 397), «... անդ կազմեալ զհանգստարանն սրբոյն՝ պատեցին զպարկեշտ մարմինն արդարոյն» (Փարս. 36), «...ուր է հանգստարան եղբօր նորին Արիստակէայ» (Խոր. 258):

Հանգիստոց/հանգստարան բառերն ամենայն հավանականությամբ կենսունակ են եղել նախագրային շրջանից: Այսօր էլ հանգիստ («գերեզման»), հանգստարան («գերեզմանոց») գործածական են Հարաբաղի բարբառում: Ծատ ժողովուրդների, այդ թվում և հայոց մեջ ընդունված էր ի հիշատակ հանգուցյալի որևէ կոթողի, շի-

¹² Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան: Ե., 1987, էջ 134:

նության կառուցումը. «Բայց Արտաշիսի յիշեալ, թէ խառնուած Արշակունտոյ է Երուանդ՝ հրամայէ զդի նորա թաղել մահարձանօք» (Խոր. 173), «Զմարմին խաչակրան վկային Քրիստոսի ի հանգիստ խորանին փոխէր» (Կոր. 94) «Ուր նախ էր գեկեղեցին շինեալ ի Գրիգորէ և վկայարանն սրբոցն վկայիցն» (Բուզ. 97):

Ուրեմն՝ մահարձան, վկայարան, վկայանոց, մատուռն, խորան... բառերը նույնպէս կարելի է ներառել թաղում իմաստային խմբի բառերի շարքում:

Մահ-թաղում հասկացությունները անպայման աղերսվում են սուգ հասկացության հետ: Մահացածի կորստյան վտանգը կամ կորուստը սգում են նրա հարազատները, ճանաչողները: Թեպետ քրիստոնեությունը արգելում էր սգո հեթանոսական ծեսերն ու արարողությունները, սակայն հեթանոսությունից ակունքվող շատ երևույթներ շարունակում են գոյատևել՝ թերևս չգիտակցելով որպէս այդպիսին: Ավելորդ չենք համարում մեջբերել հեթանոսական այդ արարողության մի նկարագրություն խորենացու Պատմությունից՝ կապված Արտաշեսի մահվան և թաղման հետ. «... եթէ որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք եւ հարճք եւ մտերիմ ծառայք. եւ որպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիոյն... Դագաղքն էին, ասէ, ոսկեղէնք, գահույքն եւ անկողիքն բեհեզեայ. եւ պատմուճան որ զմարմնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն, և զէնն ոսկով առաջի եղեալ... եւ առաջի պղնձիս հարկանելով փողս եւ զկնի կուսանք ձայնարկուք, սևազգեստ եւ աշխարող կանայք, եւ զհետ բազմութիւն ոսմկին... եւ շուրջ զգերեզմանան լինէին կամատր մահունք, որպէս վերագոյնն ասացաք» (Խոր. 190-191):

Ահա մի հատված էլ մեկ այլ գործից, որի թարգմանիչը, ամենայն հավանականությամբ, խորենացին է: Աղեքսանդրը սպանված Դարեհի դին ուղարկում է հարազատներին, «զի դուք, որպէս սովորութիւն է, լացջիք եւ ողբասջիք զնա» (Պատմ. Աղեքս. 409):

Հայ մատենագրության մեջ վկայված սգո ծեսերի վերաբերյալ տեղեկությունները կարելի է բաժանել երկու խմբի.

ա/ սգո արտահայտության նյութական, շոշափելի ձևեր.

բ/ սգո արտահայտության խոսքային ձևեր:

Առաջին խմբի մեջ ներառվում են մարդու արտաքին տեսքի հետ կապված փոփոխությունները (մազերի կտրում, փետում, զգեստի գույն և այլն): Ցայսօր էլ սև շոր հագնելը դիտվում է որպէս սգո նշան: Բերենք տարբեր կարգի օրինակներ 5-րդ դարի ինքնուրույն և թարգմանական գրականությունից. «Մազեղէնս եւ մաշկեղէնս եթէ կամիցիս ի ներքո ազանիջիր, թէ սգատր իցես եւ մի մաշկեղէն հանդերձիւ շըրջիր, զի մի փառաորիցիս» (Եւագր 140): Մաշկյա (կաշվե) հագուստը պատվական հագուստ է համարվել, որա համար էլ սգավորները այն որպէս վերնահագուստ չպետք է հագնեն: «Իբրեւ ի վերայ մեռեալ եղբարց ձերոց թուխս սգոյ զգեցաք, բայց

ոչ հանդերձ թույս, գոր զգեանն սգածք վասն մեռելոց, խոր զգեցաք վասն սգո մարմն» (Եփր. Ասորի. ՀԱ, 1930, էջ 55)¹³:

Վերոհիշյալ օրինակները թեն անմիջական հայ իրականությանը չեն վերաբերում (քանի որ դրանք թարգմանական գործերից են), բայց այդ երևույթները խորթ չեն եղել և հայերին: Իսկ ահա ներքոբերյալ օրինակը ինքնուրույն գրականությունն է, և հեղինակը՝ Մանդակունին, հանդես է գալիս որպես քրիստոնեական մշակույթի գաղափարախոս՝ ժխտելով հեթանոսականը. «...արհամարհեցէք զեղանակամարս լալականաց, անարգեցէք զփետին վարսից եւ զխզել հերաց, հալածեցէք զարիւնահանան եւ զտխրացանան» (Մանդ. 181)¹⁴:

Սգո նկարագրություն կա և Բուզանդի Պատմության մեջ՝ Գնելի սպանության հատվածում. «Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձս պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր» (Բուզ. 102):

Այո՛, քրիստոնեությունը մերժում է սուզը՝ իր հեթանոսական ակունքներով, սակայն այդ պահանջը այնքան էլ դյուրին չէր իրականանում, հատկապես քրիստոնեության վաղ շրջանում. երբեմն միայն բարձրաստիճան, ուժեղ անհատներն էին կարողանում կիրառել քրիստոնեական ուսմունքի այդ դրույթը: Բուզանդի հավաստմամբ այդպիսին էր Ներսեսը, որի օրոք «ոչ ոք իշխէր արտաքոյ կարգի կանոնի եկեղեցոյ լալ զմեռեալն եւ կոծ ոք դներ կամ աշխարանս մեռելոյն, եւ ոչ ձայնս ոք արկանէր ի վերայ մեռելոյն յաւուրսն Ներսիսի, այլ լոկ արտասուօք եւ ըստ արժանի սաղմոսիք եւ օրհնութեամբ, կանթեղօք եւ մոմեղինօք լուցելովք զմեռեալսն յուղարկէին», իսկ Ներսեսի մահից հետո նորից գլուխ է բարձրացնում հեթանոսականը. «Զմեռեալսն լային, փողովք եւ փանդովք եւ վնօք զկոծսն պարուցն կաքաւելով, զտիգսն հատեալս, զերեսս պատառեալս, արք եւ կանայք պղծութեամբ ճիւղութեամբ պարուք դէմ ընդ դէմ հարկանելով եւ կամ ասիս հարկանելով զմեռեալսն յուղարկէին» (Բուզ. 193): Փաստորեն Բուզանդի այս հատվածում ներկայացված են թաղման և սգո հեթանոսական արարողությունների հիմնական գծերը¹⁵:

Սուգ հասկացության իմաստային ենթախմբի հիմնական անդամը սուգ բառն է, որը առկայանում է նաև որպես մի շարք կապակցությունների բաղադրիչ. սուգ մեծ, աուրք սգոյ, հանդերձ սգոյ, տուն սգոյ... և այլն: Այն հանդես է գալիս որպես բայական հարադրության անդամ. սուգ առնուլ, սուգ ունել, սուգ դնել...:

Սուգ բառի հոմանիշային շարքի անդամներն են աշխար, աշխարանք, գեր, կոծ, ողբ, լաց, կական, քուք: Սրանց բայական ձևերը, բացի բայահիմք+ալ /ել/, հանդես

¹³ Ղարաբաղի քարբառում կա սղվաքյիր («սևակիր») բառը, որն ունի նաև «այրի» նշանակությունը:

¹⁴ ՆՀԲ-ն չունի եղանակամայր բառը: Ա. Բ-ն բառը մեկնում է «եղերամայր»:

¹⁵ Երկար մազերը որպես ուրախության խորհրդանիշ պահպանվել են որոշ առածներում. «ուրախությունից մազերն է երկարում, դարդից՝ եղունգը», «մազը սրտիցն է ջուր խմում» (Տե՛ս Ա. Ղանալանյան, Առածամի: Ե., 1960, էջ 61-62): Հերոդոտի վկայությամբ, քոյր մարդիկ, որպես սգո նշան, խուզում էին իրենց մազերը, միայն եզիպտացիներն են երկարեցնում իրենց գլխի մազերը, այն դեպքում, երբ մինչ այդ սափրվում էին (Տե՛ս Հերոդոտ, Պատմություն: Ե., 1986, էջ 102):

են գալիս և բայական հարադրությամբ: Այս շարքի մեջ թերևս կարելի է դնել ձայնարկու, եղերամայր բառերը:

Գեր, քուք բառերը նվազ հաճախական են¹⁶:

Բնիկ հայերեն են՝ լալ, ճիչ, ողբ, քուք, իրանական փոխառություններ են՝ աշխար, գեր, սուգ: Կոծ-ի ծագումը հստակ չէ, կական-ը համարվում է անստույգ բառ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱԲ - Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865

Ագաթ. - Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Տփղիս, 1909

Աթանաս - Ս. Աթանասի Ալեքսանդրիոյ հայրապետի ճառք. Թուղթք եւ ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899

Ասողիկ - Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմություն Տիեզերական, Պետերբուրգ, 1885

Արմ. - Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Ե., 1971-1979

Բուգ. - Փաստոսի Բուգանդացույ Պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883

Եզն. - Եզնկայ Կողբացույ Բագրեանդայ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826

Եղիշ. - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957

Եւագր. - Սրբոյն հարն Եւագրի Պոնտացույ Վարք և Մատենագրութիւնք, Վենետիկ, 1907

Խոր. - Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց, Տփղիս, 1913

Կոր. - Կորին, Վարք Մաշտոցի, Ե., 1941


ՀԱ. - Հանդէս ամսօրեայ

Մանդ. - Տեանն Յովհաննու Մանդակունույ Հայոց Հայրապետի ճառք, Վենետիկ, 1860

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1826-1827

Պատմ. Աղեք. - Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացույ, աշխատասիրությամբ Հասմիկ Սիմոնյանի, Ե., 1989

Փարպ. - Ղազարայ Փարպեցույ Պատմություն Հայոց, Տփղիս, 1904



¹⁶ Գեր «սուգ, լաց» բառը ՆՀԲ-ն չունի: